

- 114 Հանաք, ծաղր, դիրքի գործ
- 115 Իրօք, ճիշտ
- 116 Սպիտակ ծովի
- 117 Սեւ ծովի
- 118 Ծիշտ
- 119 Ծաղր
- 120 Եղանակը
- 121 Որոշ
- 122 Կայծակ
- 123 Ուժեղ, սաստիկ
- 124 Խոնավություն, ցող
- 125 Այնժամ, այն ժամանակ, այնուհետև
- 126 Իրենք
- 127 Մերկ
- 128 Ուտելիք, կերակուր
- 129 Տարբերություն
- 130 Փայտի
- 131 Յղի
- 132 Մշտապես
- 133 Բարեկի, լաւ
- 134 Հասակ
- 135 Երեխայ
- 136 Ժամանակ
- 137 Հալեւոր, ծեղ
- 138 Քիթ
- 139 Օձ
- 140 Լեզու
- 141 Բազի վախտ — երբեմն
- 142 Վերք
- 143 Դեռ
- 144 Գունդ, գնդաձեւ
- 145 Լրիւ, միասնական, ամբողջ
- 146 Զինուոր, զօրք, բանակ
- 147 Գրաւել, զարթել, նուաճել
- 148 Թարգմանուեց

ՍՈՒՄԳԱՅԻԹԵԱՆ ԶԱՐԴԵՐ. ԻՐՈՂՈՒԹԻՒՆ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Յարութիւն Սարութեան

Լեռնային Ղարաբաղի Հայութեան ինքնորոշմանը սատարելու նպատակով 1988 թ. փետրուարի 20-ից Երեւանի Թատերական հրապարակում կազմակերպուող Հարիւր Հազարանոց հանրահաւաքներին ի պատասխան, փետրուարի 26-ին Հայաստանի եւ Ադրբեջանի աշխատակողներին ուղերձ յղեց ԽՍՀՄ ԿԿ Կենտրոնի քարտուղար, ԽՍՀՄ փաստացի ղեկավար Մ. Ս. Գորբաչովը: Նա կոչ էր անում հանգստութեան, առաջարկում էր վերադառնալ նորմալ կեանքի եւ աշխատանքի, պահպանել հասարակական կարգուկանոնը<sup>1</sup>: Եւ եթէ Երեւանում փետրուարի 26-ին որոշուեց դադարեցնել հանրահաւաքներն ու վերադառնալ աշխատանքի, ապա Ադրբեջանական ԽՍՀ Սոււմգայիթ քաղաքում իրադարձութիւնները զարգացան լրիւ այլ հունով:

Սոււմգայիթը գտնուում է Բաքուից 25-30 կմ հեռավորութեան վրայ: Հայրենական մեծ պատերազմի անխօրէին այստեղ ապրում էր մօտ 5000 մարդ: Պատերազմից յետոյ այդ բնակավայրը ընդգրկուեց «Կոմունիզմի խոշոր կառոյցների» օբյեկտների շարքում եւ արդէն 1970-ական թուականներին արդիւնաբերական կարեւորութեամբ Բաքուից յետոյ գրաւեց երկրորդ տեղը հանրապետութիւնում: Սոււմգայիթի կառուցման գործում մեծ ներդրում ունեցան Ադրբեջանի հայ քաղաքացիները ու մասնատրապէս, Ղարաբաղից ապրուստի համար այնտեղ մեկնածները. պատահական չէ, որ թերթերում գրում էին, թէ «Սոււմգայիթի շինարարների աշխատանքային լեզուն հայերէնն է»<sup>2</sup>: 1988 թ. Սոււմգայիթն ուներ

շուրջ 250 հազ. բնակչութիւն, որից 18-20 հազարը հայեր էին: Խորհրդային հանրութեանը քաղաքը տարիներ շարունակ հրամցում էր որպէս "Комсомолец-на-Каспии", "Город комсомольской славы" այն է՝ ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակուած «երիտասարդութեան քաղաք»: մասնատրապէս, այնտեղ էր գտնուում ինտերնացիոնալ բարեկամութեան Ադրբեջանի ամենամեծ թանգարանը<sup>3</sup>:

Փետրուարի 27-ից սկսած 3 օր շարունակ, խորհրդային զօրամիւտերումների առկայութեան պայմաններում, Սոււմգայիթում տեղի ունեցան զանգուածային անկարգութիւններ, որոնց ընթացքում դաժանաբար, կարելի է ասել XX դարակազմի իրականացուած Հայերի ցեղասպանութեան թուրքական մեթոդներով, սպանուեցին՝ պաշտօնական տուեալներով՝ «Հայ ազգութեան 26 քաղաքացի»<sup>4</sup>: Սակայն, որոշ տուեալների համաձայն, զոհերի թիւն անցնում էր 115-ը<sup>5</sup>, անգամ հասնում էր մինչեւ 197-ը<sup>6</sup>: Հայերին ծեծում էին, խոշտանգում էին, բռնաբարում էին, դուրս էին նետում պատուհաններից, սպանում էին ամրանաձողերով ու դանակներով, կտրատում կացիների հարուածներով, զլխատում, այրում էին խարոյկներում... Այս գործողութիւնները ՏԱՍՍ-ի պաշտօնական հաղորդագրութեան մէջ ներկայացուած էին որպէս թէ «մի խումբ խուլիգանական տարրեր անկարգութիւններ են հրահրել: Տեղերն զտել սանձարձակութեան ու բռնութեան դէպքեր»<sup>7</sup>: Սոււմգայիթում Հայերի կոտորածը ԽՍՀՄ դատախազութեան կողմ



ոճրագործությունը» (նկ. 2), "Политическую оценку сумгаиту" («Քաղաքական գնահատական Սումգայիթին<sup>13</sup>»), (նկ. 3), "Требуем от правительства СССР политическую оценку сумгаита!" («ԽՍՀՄ կառավարութիւնից պահանջում ենք Սումգայիթի քաղաքական գնահատական»), (նկ. 4), նոյեմբերի 18-ի երթի ժամանակ՝ «Սումգայիթեան սպանդին քաղաքական գնահատական» (նկ. 5), սումգայիթեան իրադարձութիւնների առաջին տարեգրածին՝ 1989 թ. փետրուարի 28-ին՝ «Սումգայիթեան ոճրագործությունը՝ քաղաքական գնահատական», շեշտում էր այդ գնահատականի անհրաժեշտութիւնը ժողովուրդների հետագայ փոխյարաբերութիւնների գործում՝ "Политическая оценка сумгаитских зверств – залог добрососедства" («Սումգայիթեան վայրենութիւնների քաղաքական գնահատականը բարեգրացիութեան բարակական է»), 1989 թ. ապրիլի 24-ին՝ «Քաղաքական գնահատական Սումգայիթի կազմակերպիչներին» (նկ. 6), 1990 թ. փետրուարի 28-ին՝ սումգայիթեան իրադարձութիւնների երկրորդ տարեգրածին՝ «Հայերի ցեղասպանութեանը տալ քաղաքական գնահատական»: Յատկանշական է, որ քաղաքական գնահատականի պահանջով վերորբերել ցուցապաստառներում միայն մէկ դէպքում է նշում «հասցէատէրը», մնացածների համար կարելի է ենթադրել, որ դրանք ուղղուած էին ինչպէս Հայաստանի, այնպէս էլ ԽՍՀՄ ղեկավար մարմիններին: Ընթերցողը կարող է հարց տալ՝ «Բայց չէ՞ որ Հայաստանի Գերագոյն խորհուրդը դատապարտել էր սումգայիթեան ջարդերը»: Յիշենք, որ 1988 թ. յունիսի 15-ին Հայկական ՍՍՀ Գերագոյն խորհուրդի նստաշրջանը, իր որոշմամբ զոհուածների ընտանիքներին եւ հարազատներին ցաւակցութիւն յայտնելով հանդերձ, դատապարտել էր «1988 թ.

փետրուարին Սումգայիթ քաղաքում հայ բնակչութեան նկատմամբ կատարուած ոճրագործութիւնները»<sup>14</sup>: Սակայն «դատապարտում» եւ «ոճրագործութիւն» որակաւորումները չէին բաւարարում մարդկանց, դրանք չէին ընկալուած՝ որպէս քաղաքական գնահատական:

Վերը դիտարկուած ցուցապաստառներից ժամանակագրորէն վերջինում քաղաքական գնահատականի պահանջը ուղեկցում էր սումգայիթեան իրադարձութիւնների «ցեղասպանութիւն» որակաւորմամբ, քանզի դրանք միանշանակ համարուում էին 1915 թ. Մեծ եղեռնի հետ: Նշենք, որ դաշտային նիւթերը վկայում են, որ Ղարաբաղեան շարժման մէջ նման գնահատականն առաջին անգամ հանդէս է եկել հէնց ցուցապաստառներում՝ հատուկենտ ձեւով արդէն մարտի 8-ին, զանգուածային՝ ապրիլի 24-ին<sup>15</sup>: Սումգայիթը որպէս ցեղասպանութիւն գնահատելու պահանջ եւ գնահատական պարունակող ցուցապաստառներից նշենք հետեւեալները. "Мы требуем признать геноцид в сумгаите и наши права беженцев!" («Մենք պահանջում ենք ճանաչել ցեղասպանութիւնը Սումգայիթում եւ փախստականների մեր իրաւունքները»), (7 յունիսի 1988 թ.), (նկ. 7), "Верховный Совет должен признать геноцид в Сумгаите" («Գերագոյն խորհուրդը պէտք է ճանաչի ցեղասպանութիւնը Սումգայիթում»), (13 հոկտեմբերի 1988 թ.), (նկ. 8), "Верховный Совет должен признать геноцид" («Գերագոյն խորհուրդը պէտք է ճանաչի ցեղասպանութիւնը»), "Признать геноцид армян в Сумгаите" («Ճանաչել հայերի ցեղասպանութիւնը Սումգայիթում»), (երկուսն էլ՝ 28 փետրուարի 1990 թ.): Այս շարքի ցուցապաստառներից երկրորդի (ամրացուած էր Կոնսերվատորիայի պատին) տակի մասում սումգայիթեան ողբերգու-

թեան պաշտօնապէս յայտարարուած 26 հայ զոհերի լուսանկարներն էին, որոնց ներքնամասում մարդիկ մոմ էին վառում՝ թերեւս անմեղ զոհերի հոգու փրկութեան համար: Հաւաքական «սրբապատկերի» տպաւորութիւն էր թողնում նաեւ Սումգայիթի զոհերի տրանսպարանտ-լուսանկարների տեղադրումը Օպերայի հրապարակում՝ արձաններից մէկի պատուանդանին<sup>16</sup>:

Կային ցուցապաստառներ, որոնք ուղղակի արձանագրում էին, որ «Սումգայիթը կազմակերպած ցեղասպանութիւն է» (1988 թ. առաջին կէս<sup>16</sup>), (նկ. 9), կամ "Осуждаем геноцид армян в Сумгаите и Баку" («Դատապարտում ենք հայերի ցեղասպանութիւնը Սումգայիթում եւ Բաքու»), (28 փետրուարի 1990 թ., Ստեփանակերտ): Վերջին ցուցապաստառում կրկին նկատուում է զարաբաղցիների արտայայտութիւնների մէջ զգուշաւորութիւն, չափաւորութիւն պահպանելու ձգտումը, ինչը թերեւս պայմանաւորուած էր նաեւ «Կենտրոն»-ին (ուժ վերաբերմունքից նրանք իրենց կախուած էին համարում) սուր ձեւակերպումներով չվիրաւորելու ցանկութեամբ:

Մինչդեռ երեւանեան հանրահաւաքներում պահանջում էին աւելի արմատական քաղաքական գնահատականների կայացում, մասնաւորապէս՝ «ՀՍՍՀ Գերակայացում, մասնաւորապէս՝ «ՀՍՍՀ Գերագոյն խորհուրդը պարտաւոր է ճանաչել հայերի ցեղասպանութիւնը Ադրբեջանական ՍՍՀ-ում 1920-1988 [թթ.]» (7 եւ 18 նոյեմբերի 1988 թ.), (նկ. 10, 11): Այս ցուցապաստառի հեղինակները թերեւս առաջնորդուել էին «Ցեղասպանութեան ոճրագործութեան կանխման եւ ցեղասպանութեան համար պատժի մասին» ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունուած Կոնվենցիայի յօդուած 2-ի յատկապէս «գ» կէտով, որտեղ սուրբ էր. «Սոյն կոնվենցիայում ցեղաս-

պանութիւն են ճանաչուած հետեւեալ գործողութիւնները, որոնք կատարուած են որեւէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրօնական խումբ՝ որպէս այդպիսին լիովին կամ մասամբ ոչնչացալու մտադրութեամբ. գ) որեւէ խմբի համար այնպիսի կենսական պայմանների կանխամտածուած ստեղծումը, որոնք նպատակաւորուած են այդ խմբի լիովին կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը»:

Ղարաբաղեան շարժմանը նախորդող տարիներին, ինչպէս նաեւ Ծարժման ժամանակ շրջանառութեան մէջ էր յատկապէս մարզի ժողովրդագրական վիճակի շուրջ հետեւեալ փաստը՝ մարզի բնակչութեան կազմում հայերը 1921 թ. կազմել են 94,73 %<sup>17</sup>, իսկ 1979 թ. մարդահամարի տուեալներով՝ 75,9 %<sup>18</sup>, 1939-79 թթ. մարզում հայերի թիւը պակասել էր 7,3 %-ով, իսկ ադրբեջանցիներն աւելացել էին 2,6 անգամ: Ղարաբաղցի իրաքանչիւր երեք հայից առնուազն երկուսը անվերադարձ հեռացել էր իր բնօրրանից: Ծատ-շատերի համոզմամբ, ՀՂԻՄ-ից, ինչպէս նաեւ Ադրբեջանի ամբողջ տարածքից հայ բնակչութեան զանգուածային արտահոսքը պայմանաւորուած էր տնտեսական, սոցիալական եւ մշակութային բնագաւառներում կիրառուած քաղաքականութեան կոպիտ խեղաթիւրումներով, այնպիսի պայմանների ստեղծմամբ, որ հայերը հեռանային մեկընդմիջում<sup>19</sup>:

1988 թ. ուշ աշնանը ստեղծուած ցուցապաստառի հեղինակները թերեւս նկատի ունէին նաեւ պաստառում նշուած տարիներին իրականացուած ոչ միայն «սպիտակ», այսինքն՝ անարիւն ցեղասպանութիւնը, այլ նաեւ 1920 թ. Շուշուայ, 1988 թ. Սումգայիթի կոտորածները, Շուշիի, Կիրովաբադի իրադարձութիւնները, Մինգեչաուրի, Շամխորի,

Խանլարի, Դաշքեսանի, Վարդաշէնի, Շեքիի հայուժեան նկատմամբ տեղ գտած բռնութիւնները եւ այլն:

Գնահատականները միշտ էլ, որ լինում էին ուղղակի եւ կտրուկ, «ճակատին» ասուած: Այսպէս, դեռեւս 1988 թ. ապրիլի 24-ի մի ծաղկէպսակի ժապաւէնին գրուած էր, որ ժամանակի ամենամեծ դատաւորը՝ "История не простит сумгаитских убийц" («Պատմութիւնը չի ների սուղագայիթեան մարդասպաններին»): 1989 թ. փետրուարի 28-ի տրանսպարանտներէց մէկը սարկազմով նշում էր, թէ «Սուղագայիթը երկու ժողովուրդների «բարեկամութիւնն է»»: Այս եւս անդրադարձ է խորհրդային տարիներին պրոպագանդուող ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամութեան ոգով դաստիարակութեամբ ժողովուրդների միջեւ առկայ պրոբլեմները կոծկելու քաղաքականութեան սնանկութեանը: Նոյն օրուայ մէկ այլ տրանսպարանտ ժամանակագրորէն թերեւս վերջին անգամ արժարձում էր վերակառուցման քաղաքականութիւնից ակնկալիքների հոսսախարութեան թեման՝ "Геноцид Сумгаита – позор на знамени перестройки" («Սուղագայիթի ցեղասպանութիւնը անարգանք է վերակառուցման դրօշին»): Ինչո՞ւ ենք շեշտում «վերջին անգամ»-ի հանգամանքը: Բանն այն է, որ դարաբաղեան հարցի դիտարկումը, որպէս վերակառուցման «քննաթերթիկ», «հայելի», «սիրտ», «փորձարկում» գրութիւններով ցուցապատաները եւ ժողովրդական համապատասխան տրամադրութիւնները գերիշխում էին Ղարաբաղեան շարժման սկզբին՝ 1988 թ. փետրուարին եւ աստիճանաբար մարելով, ընդամէնը մէկ-երկու օրինակներով հասան մինչեւ նոյն տարուայ նոյեմբերի սկիզբը<sup>20</sup>:

Ղարաբաղեան շարժման ետսումգա-

յիթեան առաջին իսկ ցուցապատաներում տեղ գտաւ Սուղագայիթ տեղանուան օգտագործումը՝ որպէս հայերի կոտորածի ու ջարդի, ցեղասպանութեան հոմանիշ: Մասնաւորապէս, այդ ակնարկն է հանդիպում վերը յիշուած «Սուղագայիթը երկու ժողովուրդների «բարեկամութիւնն է»», ինչպէս նաեւ մինչ այդ, 1988 թ. հոկտեմբերի 13-ին եւ ամենայն հաւանականութեամբ Խոջալուի սեպտեմբերեան դէպքերին որպէս արձագանք առաջացած "Прекратить "Сумгаит" в Карабахе" (նկ. 12), "Stop "Sumgayit" in Karabakh!" («Դադարեցնել «Սուղագայիթը» Ղարաբաղում»), (նկ. 13) ու նաեւ այլ ցուցապատաներում:

\* \* \*

Խորհրդային եւ ռուս զինուորի անկատար վերաբերմունքի փոփոխութիւն մատնանշող գնահատականի իւրօրինակ ձեւ է առկայ մէջբերումային սկզբունքով ստեղծուած հետեւեալ երկու ցուցապատաներում՝ "Это же наши дети. Бухенвальдце, Освенцем, Хатынь – Обмен опыта – Сумгаит, Масис, Звартноц, Шуша, Степанакерт..." («Չէ որ սրանք մեր երեխաներն են. Բուխենվալդէ, Օսվենցեմ, Խատին - Փորձի փոխանակութիւն - Սուղագայիթ, Մասիս, Զուարթնոց, Շուշի, Ստեփանակերտ...») (18 նոյեմբերի 1988 թ.) (նկ. 14), «3 ժամեայ ուշացում» (28 փետրուարի 1989 թ.): Դիտարկենք սրանք առանձին-առանձին:

\*

Առաջին պլակատում "ЭТО ЖЕ НАШИ ДЕТИ" գրութեան ներքոյ պատկերուած է Ֆաշիստ-էսէսականի եւ խորհրդային ներքին զօրքերի զինծառայողի ձեռքսեղմում, որից արիւն է կաթում: Էսէսականի բազկապատին համապատասխան խորհրդանշան է պատկերուած, տակը՝ փոքր շրջանակի մէջ ներառուած ֆա-

շիստական կեռխաչ, խորհրդային զինծառայողի բազկապատին գրուած է "ВВ" (այսինքն՝ Внутренние Войска), տակին նկարուած է մահմեդականութեանը բնորոշ խորհրդանիշը՝ կիսալուսին եւ աստղ: Էսէսականի դաստակից ծայրն արիւնօտ ոստիկանական մահակ է կախուած, խորհրդային զինծառայողի դաստակից՝ նոյնպէս արնաներկ եւ արիւն կաթող (ինչը թերեւս խորհրդանշում է դրա վերջին ժամանակներս օգտագործման մէջ լինելու հանգամանքը) սակրաւորի բահ (саперная лопата)<sup>21</sup>, որն ընդհանրապէս մաս է կազմում զինուորական հանդերձանքի եւ նախատեսուած է փոքր, անհատական օգտագործման դիրք փորելու, նաեւ՝ ակննագերծման համար:

Արդ, ինչո՞ւ էր պայմանաւորուած անան համադրումը եւ ինչո՞ւ հէնց 1988 թ. մոյսեմբերին: Նախ յիշենք, որ Էսէսը գերմանական ֆաշիզմի գլխաւոր յենարանը կազմող կազմակերպութիւններից էր, մասնաւորապէս նրա կազմում էին գտնուում համակենտրոնացման ճամբարների (որոնք փաստօրէն նուաճում ժողովուրդների անկատար իրականացումը ցեղասպանութեան գործիք էին ծառայում) հսկողութիւնը եւ կալանաւորների անկատար հաշուեհարդարը իրականացնող յատուկ ստորաբաժանները, ինչպէս նաեւ անվտանգութեան ծառայութեան մարմինները (հետախուզութիւն եւ հակահետախուզութիւն): Էսէսը գերմանիայում եւ գրաւեալ տարածքներում իրականացնող զանգուածային տեղորոշ գլխաւոր ուժն էր: Պատերազմի աւարտից յետոյ Նիւրնբերգեան դատաւարութեան կողմից այն դատաւարտուեց որպէս յանցագործ կազմակերպութիւն: ԽՍՀՄ ներքին գորքերը Ներքին գործերի նախարարութեան բաղկացուցիչ մասն էին կազմում: Նրանք կոչուած էին պահպանելու

պետական օբյեկտները, ինչպէս նաեւ կատարում էին այլ բնոյթի մարտական խնդիրներ, մասնաւորապէս՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին կոչուած էին պաշտպանելու ռազմաճակատների եւ բանակների թիկունքը, ազատագրուած բնակավայրերում կայազօրային ծառայութիւն էին իրականացնում, մասնակցում էին թշնամական հետախուզական ծառայութիւնների վնասագերծմանը:

Էսէսականի ձեռքի ներքոյ գրուած են համակենտրոնացման ճամբարների եւ բնակիչներով հանդերձ հրդեհի մատնուած գիւղի անուններ: Յիշենք, որ գերմանական վեյմար քաղաքի մերձակայքում գտնուող Բոխենվալդ (այլ ոչ Բոխենվալդէ, ինչպէս որ է պլակատում) համակենտրոնացման ճամբարում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ոչնչացուեց 56 հազ. մարդ, օկուպացուած Լեհաստանի տարածքում ստեղծուած Օսվենցիմ (այլ ոչ Օսվենցեմ, ինչպէս պլակատում է) ճամբարում՝ 4 մլն մարդ, իսկ ֆաշիստների կողմից գրաւուած Բելառուսիայի Միանսկի շրջանի Խատին գիւղը ամբողջովին ոչնչացուեց իր 149 բնակիչներով հանդերձ:

Խորհրդային ներքին զօրքերի զինծառայողի ձեռքի տակ գրուած վայրերի անունները՝ պլակատի տրամաբանութեամբ՝ հանդիսանում են վերոյիշեալ ճամբարների եւ ոչնչացուած գիւղի համարժեքները թերեւս որպէս երեւոյթ, քանզի քանակային առումով դրանք անհամատեղելի են:

Սուղագայիթում տեղ գտած իրադարձութիւնների մասին վերն արդէն ասուել է: Այստեղ աւելացնենք պլակատի տրամաբանութիւնից բխող հետեւեալ ինֆորմացիան. բանն այն է, որ երեք օր շարունակ Սուղագայիթում մոլեգնող ջարդերին եւ աւերածութիւններին գրեթէ լի-



ստորին աջ անկիւնում թեւաւոր խօսքի դեր ձեռք բերած գորբաչովեան արտայայտութիւնն էր՝ "это же наши дети": Նմանատիպ մէկ այլ պլակատ մեզ հանդիպեց 1988 թ. նոյեմբերի 7-ի «շքերթի» ժամանակ. այստեղ եւս սայլակի մէջ տանկ էր դրուած ու գորբաչովեան մէջբերումն էր<sup>30</sup> (նկ. 16):

Ինչո՞վ էր պայմանաւորուած Շուշիի եւ Ստեփանակերտի առկայութիւնը դիտարկուող պլակատում: Սեպտեմբերի 18-ի Խոջալուի դէպքերին<sup>31</sup> յաջորդեցին Շուշիի հայ բնակիչների տների հրդեհումը եւ Ստեփանակերտի աղբբջանցիների տների «ինքնահրդեհումը»: Հրդեհուեց աւելի քան 30 տուն<sup>32</sup>: Յաջորդող մի քանի օրուայ ընթացքում Շուշիի՝ իրենց թալանուած ու հրդեհուած տները լքեցին քաղաքում բնակուող գործնականում բոլոր հայերը, Ստեփանակերտից էլ հեռացան կենտրոնական թաղերում բնակուող աղբբջանցիները: Արդիւնքում սեպտեմբերի 21-ին ԼՂԻՄ-ի եւ Աղբամի շրջանի տարածքներում մտցուեց յատուկ դրութիւն եւ հաստատուեց պարետային ժամ:

Ստեփանակերտում զինուորները օրուայ ընթացքում, դեռ մինչեւ պարետային ժամը անց էին կացնում փաստաթղթերի բազմաթիւ անհիմն ստուգումներ, շատ դէպքերում թոյլ էին տալիս կոպտութիւններ յատկապէս կանանց նկատմամբ, երբեմն պարզապէս ծեծում էին մարդկանց այն աստիճան, որ նրանք ստիպուած բժշկական օգնութեան էին դիմում: Պարետային ժամից յետոյ զինուորականները բնակիչներին ստիպում էին անջատել տների լոյսն ու հեռուստացոյցը, արգելում էին անգամ օգտուել բակերում գտնուող սանհանգոյցներից եւ ջրի ծորակներից, հայհոյում էին ոչ միայն առանձին քաղաքացիներին, այլեւ անպարկեշտ արտայայտութիւններ էին գործածում հայ

ժողովրդի նկատմամբ, խոստանում էին այնպէս անել, որ «հայերը կամաւոր գրկախառնուեն ադրբեջանցիների հետ»:

Նոյեմբերի կէսերին՝ Խաչին տափի (Թոփխանա) շուրջ Աղբբջանում նոր թափ առած հակահայկական տրամադրութիւնների ֆոնին՝ ԽՍՀՄ ՆԳՆ ստորաբաժանումները եւ դեսանտայինները ստեփանակերտցիներին նկատմամբ հերթական անգամ ուժ կիրառեցին՝ օգտագործելով մահակներ եւ սակրաւորի բահեր<sup>33</sup>:

Այսպիսով, դիտարկուած պլակատը իր գնահատականներով շարունակում է զուարթնոցեան դէպքերով սկսուած եւ աշնանային իրադարձութիւնների շնորհիւ նոր որակ ստացած խորհրդային եւ ռուս զինուորի մասին ունեցած կերպարի ձեւափոխման գործընթացը: Սակայն այս պլակատով կարծես թէ առաջին անգամն էր, որ խորհրդային զինուորը իր գործելակերպով համեմատութեան մէջ էր դրում խորհրդային ժողովրդին ամենամարմար մարդկային կորուստներ եւ աներաժոյթիւններ պատճառած գերմանական ֆաշիստի հետ ու այդպիսով կարծես աւելի ծանրակշիռ էր դարձնում խորհրդային երկրի ներսում կարգուկանոնի համար, սոււմբայիթեան եւ համանման ձեռագրով իրականացուած միւս իրադարձութիւնների համար պատասխանատուութեան մեծ բաժին ունեցող ներքին զօրքերին տրուող գնահատականը: Սա արդէն ապտակ էր խորհրդային գաղափարախօսութեանը, խորհրդային կարգերին ընդհանրապէս եւ նշան այն բանի, որ Ղարաբաղեան շարժումը անել հակախորհրդային ուղղուածութիւն ձեռք բերելու որակական փոփոխութիւնների եզրին է: Ինչպէս ասում են, արձագանքները չստիպեցին իրենց երկար սպասել՝ նոյեմբերի 24-ին Երեւանում յայտարարուեց արտակարգ դրութիւն եւ մտցուեց պարետային ժամ:

Ինչպէս վերը նշուեց, «3 ժամեայ ուշացում» ցուցապատուող տեքստը նոյնպէս մէջբերում է Մ. Գորբաչովի յուլիսի 18-ին կայացած ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի նախագահութեան նիստի ընթացքում ունեցած ռեպլիկի<sup>34</sup>: Հայաստանի Գրողների միութեան նախագահ Վարդգէս Պետրոսեանի ելոյթի ժամանակ հնչած սոււմբայիթեան իրադարձութիւնները որպէս ցեղասպանութիւն որակելու մտքի դէմ առարկելուց էր, որ Մ. Գորբաչովն ասաց, թէ ի՞նչ ցեղասպանութեան մասին է խօսքը, երբ մեր զինուորները ուշացել են ընդամէնը 3 ժամով: Միանգամից նկատեանք, որ ԽՄԿԿ Գլխաւոր քարտուղարի ասածը չէր համապատասխանում իրականութեանը:

Բազմաթիւ վկայութիւններ կան այն մասին, որ Սոււմբայիթում մոլեգնող սպանութիւնների ժամանակ, երբ հայ մարդիկ կամ անգամ ադրբեջանցիները դիմում էին զինուորականների օգնութեանը, նրանք պատասխանում էին, թէ միջատելու հրաման չունեն<sup>35</sup>: Փաստերը վկայում են, որ զինուորական լրացուցիչ ստորաբաժանումները Սոււմբայիթ եւ մտել դեռեւս փետրուարի 28-ի<sup>36</sup>: Իսկ մէկ օր անց՝ երեկոյեան ժամերին, Սոււմբայիթում անց՝ երեկոյեան ժամերին, Սոււմբայիթում սպանուել էին շուրջ տասը հայեր, անթորաւաններ էին տաւանակ բնակարաններ, միայն 41 Ա թաղամասում այդ օրը տեղ գտած յարձակումներին մասնակցել էր շուրջ 400 մարդ: Այսմեղովի եւ նրա գործակիցների գործի կապակցութեամբ դատաւարութեան ընթացքում հնչած վկայութիւններն այնքան համոզեցուցին էին, որ ստիպեցին ԽՍՀՄ Գերագոյն դատարանին մասնաւոր որոշում կայացնել քննելու համար Սոււմբայիթ մտցուած որոշ զինուորական ստորաբաժանումների անգործունէութեան հարցը<sup>37</sup>:

Ալեքսանդր Վասիլեւսկու պատկերա-

ւոր համեմատութեամբ, անգլիական նաւերը «երեք օրում» կտրեցին Ատլանտեան օվկիանոսը եւ հասան Արգենտինայի կողմից օկուպացուած, Մեծ Բրիտանիային պատկանող Ֆոլկլենդեան կղզիներ եւ «գրեթէ նոյնքան պահանջուեց, որպէսզի մեր զօրքերը հասնեն Սոււմբայիթ»<sup>38</sup>:

Այնպէս որ ճիշտ կլինէր, եթէ Մ. Գորբաչովը օգտագործէր «3 օրեայ ուշացում» արտայայտութիւնը: Իսկ երեք օրը իրաւաւոր է ցեղասպանութիւն իրականացնելու համար: Յիշենք, որ երեք օր տեւեցին կոտորածներն Ադանայում 1909 թ., շարժերը Բաքում 1918 թ. սեպտեմբերին, Շուշիում 1920 թ. ապրիլին ...

Նկատենք, որ ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի նախագահութեան յուլիսի 18-ի նիստից յետոյ արդէն դժուար էր յուսար, որ սոււմբայիթեան ոճրագործութիւնները կգնահատուեն որպէս ցեղասպանութիւն:

Բանն այն է, որ երկրի փաստացի ղեկավարն իր խօսքում արդէն նշել էր, որ «Յեղասպանութիւնը որոշակի քաղաքականութիւն է, ռասայական, կազմակերպութիւն է ոչ տարերային: Իսկ Սոււմբայիթում վայրագութիւններ են արել հասարակութեան թափփոխուկներ: Պարզուել է, թէ ովքեր են դրանք: Իսկ ցեղասպանութիւնը որեւէ ժողովրդի կամ փոքրամասնութեան նկատմամբ գիտակցաբար վարուող ոչնչացման քաղաքականութիւն է: Ինչո՞ւ էք դուք ուզում բանդիտների արարմունքը վերագրել ամբողջ Ադրբեջանին: Ի՞նչ ցեղասպանութեան մասին կարելի է խօսել»<sup>39</sup>: Նման որակումներից յետոյ այն ժամանակների խորհրդային Միութիւնում դժուար թէ երբեք տոււաւ վկայութեան իրադարձութիւններն այլ գնահատականի արժանանալին:

Այն փաստը, սակայն, որ մարդիկ շարունակում էին կենտրոնից պահանջել



տական սումգայիթին»), "Политическую оценку сумгаиты" («Քաղաքական գնահատական Սումգայիթին»), "Кто стоит за пала- чами сумгаита???" («Ո՞վ է կանգնած Սում- գայիթի դաժիճների յետևում»), «Բացառապես Սումգայիթի կազմակերպիչներին» ցուցաբա- րանները, 1989 թ. փետրուարի 28-ի սգոյ երթի ժամանակ՝ «Որտե՞ղ են Սումգայիթի ցեղասպա- նության կազմակերպիչները» ցուցաբա- րանները և այլն:

Եթե ցուցաբա- րանների հեղինակները նա- տակ ունենալին Սումգայիթ անունը օգտա- գործել որպես հասարակ անուն՝ այդպիսով բնորոշելով նույնանուն քաղաքում կատարուած եղեռնագործություն երեսույթը և դրանով իսկ խորհրդային քաղաքական բառապաշարում առաջարկել «ջարդ, կոտորած, ցեղասպանու- թիւն» հասկացութեան նոր հոմանիշ, ապա նրանք պարզապէս պակասի կամ տրանսպա- րանտի բոլոր բառերը, այդ թում և քաղաքի անունը, կգրելին փոքրատառերով: Կարծում ենք, որ յիշուած բոլոր դէպքերում գործ ունենք այդ կերպ նշուած անունները (ազգանուն, տեղանուն և այլն), որոնք այնքան ցաւ ու տառապանք են պատճառել մարդկանց՝ ստոր- րացնելու, ցածրացնելու, նսեմացնելու միտման հետ: Տե՛ս Յարութիւն Մարութեան, Հայ պոե- տիկան..., էջ 277-279:

- 14 Տե՛ս Հայկական ՍՍՀ Գերագոյն սովետի որոշումը Ադրբեջանական ՍՍՀ Սումգայիթ քաղաքում կատարուած ռմբակոծութիւնները դատաւարտելու մասին, «Սովետական Հայաս- տան», 16 յուլիսի 1988 թ., թիւ 142 (20463):
- 15 Մանրամասն տե՛ս Յ. Մարութեան, Հայ ինք- նութեան պատկերագրութիւնը, մաս 1. Ցեղա- սպանութիւնը Ղարաբաղեան շարժման ցուցա- պատկերում (անտիպ), գլ. 1-3:
- 16 Լուսանկարը տե՛ս «Երկաթէ շերտի», յուլիս 1988, թիւ 14, էջ 19:
- 17 Մանրամասն տե՛ս Մ. Մ. Կարապետյան, Этни- ческая структура населения Нагорного Карабаха в 1921 г. (По сельско-хозяй- ственной переписи Азербайджана 1921 г.), Ереван, 1991.
- 18 Այս հարցի շուրջ մանրամասն տե՛ս աշխար- հագրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Աւագեանի կողմից 1988 թ. կազմուած և ձեռքից ձեռք շրջող "Краткая справка без комментариев" և "Изменения в демогра- фическом составе населения в Азербайд- жанской ССР и в Армянской ССР за 1926- 1979 г." տեղեկանքները: Տե՛ս նաեւ Վ. Խոջաբէկեան, Բ. Ասատրեան, Լեռնային Ղա- րաբաղի բնակչութիւնը, «Հայրենիքի ձայն», 1 յունիսի 1988 թ., թիւ 23 (1191), էջ 6-7. ինչպէս նաեւ՝ *Нагорный Карабах*, "Историческая

справка", с. 45-58; **А. Е. Тер-Саркисянц**, *Некоторые тенденции этнокультурного развития армян Нагорного Карабаха*, «Լրաբեր հասարակական գիտութիւնների» (այսուհետ՝ ԼՀԳ), 1988, թիւ 8, էջ 14-17.

- 19 Այդ մասին մանրամասն տե՛ս, օրինակ, **Игорь Мурадян**, *Справка о социально-экономическом развитии Нагорно-Карабахской автономной области и Нахичеванской АССР за период 1920-1987 гг.*, Ереван, 1987 (ձեռագիր); **Б. С. Мирзоян**, *Нагорный Карабах (размышления над статистикой)*, ԼՀԳ, 1988, թիւ 7, էջ 43-56; **А. Е. Тер-Сар- кисянц**, *Աշխարհ*; Վլադիմիր Թովմասեան, *Ինչո՞ւ «պայթեց» Ղարաբաղը*, «Սովետական Հայաստան», 3 նոյեմբերի 1988 թ., թիւ 262 (20583). **Л. А. Валесян, Ю. А. Мурадян**, *О некоторых итогах и проблемах экономического развития Нагорного Карабаха*, ԼՀԳ, 1989, թիւ 5, էջ 3-18; **Р. С. Оганджян**, *Межнациональные отношения и миграция*, ԼՀԳ, 1989, թիւ 11, էջ 48-52; **Բազրատ Ուլու- բաբեան**, *Արցախեան գոյապայքարը*, հտ. Ա, մասն Բ, էջ 167-182, 191, 280-285. Իրի Յով- սէփեան, *Հայերի ցեղասպանութիւնը Ադրբե- ջանում (1918-1990 թթ.)*. - Հայոց ցեղասպա- նութիւն. պատճառներ և դասեր, մաս 2, Երե- վան, 1995, էջ 5-29:
- 20 Յիշենք դրանցից մի քանիսը. 1988 թ. փետ- րուարի «Վերակառուցում ազգային գործում», "Карабах – это экзамен гласности и пере- стройки" («Ղարաբաղը հրապարակայնու- թեան և վերակառուցման քննութիւնն է»), "Ка- рабах – испытание перестройки" («Ղարա- բաղը վերակառուցման փորձութիւնն է»), 1988 թ. մայիսի "Карабах – зеркало перестройки" («Ղարաբաղը վերակառուցման հայելին է»), "Перестройка исправит исторические ошибки" («Վերակառուցումը կողմի պատմա- կան սխալները»), «Ղարաբաղեան հարցը վե- րակառուցման քննաթերթիկն է», «Հայ ժողո- վուրդը կանգնած է վերակառուցման հաստա- տուն դիրքերում», "Перестройка – надежда армян" («Վերակառուցումը հայերի հույսն է»), 1988 թ. յունիսի "Карабах – сердце перестрой- ки" («Ղարաբաղը վերակառուցման սիրտն է»), 1988 թ. նոյեմբեր՝ «Արցախեան հարցի լուծումը վերակառուցման քննութիւնն է» և այլն:
- 21 Ըակատագրի քննահանգով 1989 թ. ապրիլի 8- 9-ի գիշերը Թբիլիսիում հանրահասարակ մաս- նակիցներին ցրելու համար ներքին գործերի մարտնչութեան ստորաբաժանումները օգ- տագործեցին ինչպէս մահակներ, այնպէս էլ սակրատրի բաժներ, որոնց զոհ դարձան շուրջ երկու տասնեակ խաղաղ բնակիչներ: Տե՛ս, օրինակ "Известия", 10 апреля 1989 г.; Իրի Ռոստ, *Թբիլիսիի ողբերգական գիշերը*, «Գա-

- րու», 1989, թիւ 4, էջ 42-43:
- 22 Ակնարկում այս մասին տե՛ս, օրինակ, **Влади- мир Ларин, Юрий Макарецов**, *Тревожные дни*, "Собеседник", N 15, апрель 1988, с. 12; **Иван Подсвиров**, *В переломной ситуации*, "Правда", 1988, 7 мая: Մանրամասն տե՛ս **С. Желтов**, *В Верховном Суде СССР: Свиде- тели дают показания*, "Коммунист", 25 ок- тября 1988 г.; *Настал ли час расплаты?*, "Коммунист", 30 октября 1988 г.; *Сумгаит... Геноцид... Гласность?*, с. 22-24, 28, 31-32; *Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев* (составитель, ответственный редактор Самвел Шахмурадян), Ереван, 1989.
- 23 Տե՛ս Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում. փաստաթղթերի և ձիթերի ժողովածու (կազմողներ՝ Մ. Գ. Ներսիսեան, Ռ. Գ. Սահակեան, խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսեան), Երեւան, 1991, էջ 157, 250:
- 24 Մանրամասն տե՛ս *Сумгаит... Геноцид... Гласность?*, с. 46, 48, 50-51, 58-59; *Сумгаит- ская трагедия в свидетельствах очевид- цев*.
- 25 Մանրամասն տե՛ս *К событиям в аэропорту "Звартноц" 4-5 июля*, 1988 г. Ереван, Комитет Карабахского движения Армении, с. 1-30 (ձեռագիր): Դէպքերի պաշտօնական գնահատման մասին տե՛ս, օրինակ, **С. Баб- лумян**, *Обстановка остается сложной*, "Известия", 7 июля 1988 г.; *Выступление первого секретаря ЦК КП Армении С. Г. Арутюняна по Армянскому телевидению 9 июля 1988 г.*, "Коммунист", 10 июля 1988 г., N 162 (16441); *ՍՍՀՄ դատախազութեան հա- ղորդումը*, «Սովետական Հայաստան», 13 յուլի- սի 1988 թ., թիւ 165 (20486):
- 26 Նրա մասին տե՛ս Գրիգոր Ջանիկեան, *Նախա- տակի փշէպակը*, «Գարուն», 1988, թիւ 8, էջ 34-36:
- 27 Հմմտ. **Дмитрий Сабов**, *Семь дней в Ере- ване: одна нерабочая неделя столицы Ар- мении глазами нашего корреспондента*, "Собеседник", N 32, август 1988 г.
- 28 Տե՛ս «Երկաթէ շերտի», յուլիս 1988, թիւ 14, էջ 43:
- 29 Տե՛ս ՍՍՀԿ Կենտկոմի գլխաւոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի ելոյթը, «Գրական թերթ», 22 յուլիսի 1988 թ., թիւ 30 (2398):
- 30 Տե՛ս նաեւ *Կամիթներ Թատերական հրապարա- կից*, «Ուզնի», նոյեմբեր 1988 թ., թիւ 22:
- 31 Մանրամասն տե՛ս *Լեռնային Ղարաբաղի իրա-*

- դարձութիւնների շուրջ*, «Սովետական Հայաս- տան», 20 սեպտեմբերի 1988 թ. տե՛ս նաեւ Վա- հագն Դաւթեան, *Բողոքում եմք*, «Սովետական Հայաստան», 21 սեպտեմբերի 1988 թ.: *Сум- гаит... Геноцид... Гласность?*, с. 49; **В. Б. Арутюнян**, *События в Нагорном Карабахе: Хроника, часть I* (февраль 1988 г. - январь 1989 г.). Ереван, 1990, с. 139-141; *Լեռն Արիւր-Շահնազարեան*, *Աշխարհ*, էջ 46-50:
- 32 Տե՛ս **В. Б. Арутюнян**, *Աշխարհ*, էջ 140-141.
- 33 Մանրամասն տե՛ս նոյն տեղում, էջ 141-150:
- 34 Նիստի ընթացքում Մ. Գորբաչովի յայտարարու- ման մեր տեղեկատուութիւնը յենուած է Կենտրոնական հեռուստատեսութեամբ ցուցա- դրուած միստի խմբագրուած տեսագրութեանը:
- 35 Տե՛ս թիւ 11 ծանօթագրութիւնը:
- 36 Տե՛ս, օրինակ, *Сумгаит... Геноцид... Глас- ность?*, с. 45.
- 37 Տե՛ս նոյն տեղում, с. 58-59; *Сумгаитская тра- гедия в свидетельствах очевидцев*, с. 11, 13-14.
- 38 Տե՛ս **Александр Василевский**, *Правда боли*, "Аврора", 1988, N 10.
- 39 ՍՍՀԿ Կենտկոմի գլխաւոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի ելոյթը, «Գրական թերթ», 22 յուլիսի 1988 թ., թիւ 30 (2398):
- 40 Հմմտ. վերջին տրանսպարանտը և "Сумгаит не должен повториться" վերագրով նամակ- յոդուածը, տպագրուած "Коммунист" թերթի 1988 թ. նոյեմբերի 20-ի համարում:
- 41 Անուշագրական է, որ խորհրդային Միութեան ղեկավարութիւնը, որ 1988 թ. ընթացքում բազ- միցս ցաւակցութիւններ էր յայտնել զանազան ողբերգական իրադարձութիւնների առիթնե- րով, այդ թում նաեւ՝ արտասահմանեան երկր- աների քաղաքացիներին, այնպէս էլ անհրաժեշտ են չհամարեց պաշտօնական ցաւակցութիւն և մի քանի բարի խօսքեր ուղղել Սումգայիթում դա- ժարակալ սպանուածների բարեկամներին և ժամաբար սպանուածների բարեկամներին և հարազատներին: Տե՛ս *Сумгаит... Геноцид... Гласность?*, с. 16-17. Հմմտ. **Ан. Макаров**, *Размышления во время беды*, "Советская культура", 29 декабря 1988 г.
- 42 Հմմտ. **Յ. Յակոբեան**, *Զգրուած ճշմարտու- թիւններ*, «Երեկոյեան Երեւան», 2 նոյեմբերի 1988 թ., թիւ 256 (9327), որտեղ կայ նաեւ դի- տարկուող պակաստին ուղղակիօրէն առնչուող հետեւեալ միտքը՝ «Նա, ով ձեռագնում է, թէ չի հետեւեալ միտքը՝ «Նա, ով ձեռագնում է, թէ չի տեսնում այս իրողութիւնը, վարում է *ջայլամի քաղաքականութիւն* լռնագծում իմն է՝ Յ. Մ.], որը դեռեւս ոչ ոքի յաշողութիւն չի բերել»:



Այ. 1



Այ. 2



Այ. 3



Այ. 4



պ. 5



պ. 6



պ. 7



պ. 8



գլ. 9



գլ. 10



գլ. 11



գլ. 12



գլ. 13




գլ. 14



գլ. 15



գլ. 16




գլ. 17



գլ. 18



գլ. 19



գլ. 20